# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

---

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ք. Եղեգնաձոր, Շահումյան 5 N 49 ,, 01 ,, մարտիի 2018թ.

### ,,ՎԱՐԴԱՁՈՐ" ՄԱՐԶԱՅԻՆ ԹԵՐԹԻ ՏՊԱԳՐՄԱՆՆ ԱՋԱԿՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ,,Վարդաձոր,, մարզային թերթի խմբագիր Ս. Դովլաթյանի 2018թ. փետրվարի 28-ի դիմումը և ղեկավարվելով ,,Հայաստանի Հանրապետության 2018թ պետական բյուջեի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի, ,,Վարչարարության հիմունքներ և վարչական վարույթի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի պահանջներով.

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ՝**

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի ,,Վարդաձոր,, մարզային թերթի առաջիկա համարի տպագրությանն աջակցելու նպատակով, ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված ծախսերից, ,,Վարդաձոր,, մարզային թերթի ,,ԱրդՇինբանկի ,, Եղեգնաձորի մասնաճուղում գտնվող թիվ 247583306060 դրամային հաշվին փոխանցել 100000 /մեկ հարյուր/ հազար ՀՀ դրամ:

2. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի գլխավոր ֆինանսիստին՝ օրենքով սահմանված կարգով եռօրյա ժամկետում կատարել գումարի վճարում:

Հ. ՍԱՐԳՍՅԱՆ